



**ՄԱԶԱՀԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
«ՀԱԽՈՒՆ ՄԻԶՈՒԿԱԶԵՐԾ ԱՇԽԱՐՀԻ, ՀԱԽՈՒՆ ՄԱՐԴՈՒ
ՎԵՐԱՊՐՈՒՄԻ» ԹԵՄԱՅՈՎ**

Սույն թվականի փետրվարի 14-ից 16-ը Խորհրդային Միության մայրաքաղաքում տեղի ունեցավ միջազգային համաժողով՝ «Հանուն միջուկագերծ աշխարհի, հանուն մարդու վերապրում» թեմայով, որին մասնակցում էին աշխարհի շուրջ 90 երկրներից ժամանած տարբեր մասնագիտության և զբաղմունքի տեր շուրջ 1.000 ներկայացուցիչներ (գիտնականներ, բժիշկներ, արվեստագետներ, գործարար շրջանակների մարդիկ և այլն): Համաժողովին, որը բաժանված էր ութ ենթախմբերի, որպես առանձին մի ենթախոսոր, իրենց մասնակցությունն էին բերում նաև երկրագնդի 56 երկրներից ժամանած 215 տարբեր կրոնների և դավանանքների ներկայացուցիչներ՝ քրիստոնյաններ, բուդայականներ, հինդու, հրեական, մահմետական, սինթոիստական կրոնների հետևորդներ:

Սույն համաժողովին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, իր բարձր մասնակցությունը բերեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սույր Օծություն S. S. Վազգեն Առաջինը: Վեհափառ Հայրապետին այս առջիվ ուղեկցում էին՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմների առաջնորդ S. Տիրայր արքեպոս. Մարտիկյանը, Փարիզի հայոց առաջնորդ S. Գյուտ եպս. Նագգաջյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ S. Վազգեն եպս. Քեշիշյանը և Աղոքեցանի հայոց թեմի առաջնորդ S. Անանիա եպս. Արարաջյանը:

Փետրվարի 11-ին Վեհափառ Հայրապետին դեպի Մոսկվա ճամապարհելու համար Երևանի «Զվարթնոց» օդանավակայան էր հավաքվել Մայր Աթոռի ողջ միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարակետ S. Հովհաննեսի արքեպոս. Սամաթուրյանի:

Նորին Սույր Օծությանը բարի ճամապարհ մաղթելու էին եկել նաև Հայկական ՍՍՀ Միջաստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղակալներ տիարք Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա: «Վեսլովովյի» օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորում և բարիգալստյան խոսք են ատում նոր Նախիջևանի և Ռուսաստանի

հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրելյանը, Սոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի կողմից՝ Օդեսայի և Խերսոնի միտրոպոլիտ Սերգին, Տ. Մարկել արելան և ուրիշներ:

Վեհափառ Հայրապետին ողջունելու համար օդանավակայան էր ժամանել նաև ՍՍՀՄ Մինհատրների խորհրդին առնետեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Սերգեյ Մոլիխնը:

Նորին Սուրբ Օծությունը իր շքախմբով առաջնորդվում է «Միջազգային» հյուրանոց:

Փետրվարի 14-ին, շաբաթ օրը, միջազգային համաժողովի կրոնական ենթախումբը և կուսում է իր աշխատանքները:

Սուպուտյան ժամը 10-ին «Սովինցելստրի» կոնգրեսների դահլիճում տեղի է ունենում կրոնական գործիչների հավաքի բացումը, որը կատարում է Անդրկովկասի մահմետականների Ծեյլ Ռու Խալաս Ալլաշուկովը:

Լուս աղոթքից հետո առաջարկվում է ընտրել նախագահական կազմ: Ժողովականների բացարձակ համաձայնությամբ ժողովի նախագահն է ընտրվում Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Յովենալին, որը իր հերթին հանդես է գալիս ընդարձակ մի գեկուցումով: Խոսելով միջազգային համաժողովի հրավիրման նպատակների և ծրագրերի մասին, Յովենալի միտրոպոլիտը շեշտում է, որ խաղաղության պահպանումը մեր օրերում դարձել է համամարդկային խնդիր, որի իրագործման համար հետզհետև ավելի ու ավելի տերություններ հետևողական պայքար են մղում: 1986 թվականը, որը ՄԱԿ-ի կողմից հայտարարվել էր խաղաղության տարի, ապացուցեց, որ խաղաղությունը պահպանելու համար հարկավոր է գործել, գործել բոլոր ուղղություններով: Պետք է գործակցեն բոլորը, քաղաքագետներ և կազմակերպությունների ղեկավարներ, կրոնական և գործարար մարդիկ:

Սյուրվա խոռվահուզ օրերին, նշում է Յովենալի միտրոպոլիտը, «մեծ անելիքներ ունեն նաև Եկեղեցին և հավատացյալ մարդիկ: Պատմությունից հայտնի է, որ Եկեղեցիները, ի մասնավորի խորհրդային Միության Եկեղեցիները, անհոնչ կերպով պայքարել են խաղաղության հայթանակի համար: Որպես փաստ Յովենալի միտրոպոլիտը նշում է դեռևս 1952 թվականին Զագորուսկում կայացած ՍՍՀՄ-ում գործող բոլոր Եկեղեցիների և կրոնական համայնքների ներկայացուցիչների առաջին համաժողովը, ինչպես նաև 1977-ի Մոսկվայի համաշխարհային կրոնական համաժողովը, որին նախագահում էր ինքը:

Յովենալի միտրոպոլիտի գեկուցից հետո ժողովը բաժանվում է երեք աշխատանքային խմբերի: Ընտրվում են խմբերի նախագահներ և փոխնախագահներ (դոկտ. Կարող Տոր, Վիլյամ Թոմսոն և Ռայտ (Շոտլանդիա), որից հետո հայտարարվում է փոքրիկ ընդմիջում:

Ընդմիջումից հետո, երեք աշխատանքային խմբերի բաժանվելուց առաջ, ունկնդրվում են մի շաբթ գեկուցներ՝ տարրեր կրոնական համայնքների ներկայացուցիչների կողմից: Այսպես, միջազգային համաժողովի վերաբերյալ իր և իր հետևողդմերի կարծիքն է ներկայացնում Նյու Յորքի հրեա համայնքի պետ Արթուր Շնայդերը, հինդուիստ Մայանանդան, սինթոիստ Թոնշի Միյակեն (Ճապոնիա), քրիստոնյա Վիպուլասարան (Հնդկաստան), Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչներ միտրոպոլիտ Պողոս Մար Գրիգորիոսը, Պրեման Հայլզը և ուրիշներ: Նրանք բոլորն ել միասնական են իրենց այն համոզման մեջ, թե ժամանակն է այլևս միացնելու բոլոր մարդկանց ուժերը՝ ստեղծելու համար զինաթափված և արատերազմի պատճառավայրից գերծ մի աշխարհ:



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Պ. Ն. ԴԵՄԻՇՎԵ «ՀԱՆՈՒՆ
ՄԻԶՈՒԿԱԶԵՐԾ ԱՃԽԱՐՀԻ, ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՊՐՈՒՄԻ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԻ ՀԵՏ
(17 փետրվարի 1987 թ.)

Երեկոյան ըմբիշուսից հետո ժողովը քաժանվեց երեք աշխատանքային խմբերի, որ տեղի էին ունենալու կարծիքների փոխանակում և ապագա փաստաթղթի մեջ արձարձվելիք հարցերի մշակում:

Աշխատանքային երեք խմբերը ավարտեցին իրենց աշխատանքները՝ ուղարկելով աշխատանքային համարակալու պատճենը:



Վենափառ Հայրապետը Մուսքիմի հայոց Ա. Հարություն Եկեղեցու բակում օրենսդ է համատնագանձերին:

Փետրվարի 15-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայութեալ, ուղեկցությամբ S. Տիրայր արքեպիսկոպոսի, S. Գյուտ, S. Կազգեա եպիսկոպոսների, ժամանում է Մոսկվայի հայոց եկեղեցի, որ մերկա է լինում և պատարգած արարողությանը: Օրվա պատարագին է S. Անանիա եպս. Արքաքան:

Հայկարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը իր հայրապետական օրինության և գնահատաքի խոսքն է ասում Մուկվայի հայ հավատացյալ-ներին: Խոսելով մեր ժողովորդի ողբերգական անցյալի մասին, մանավանդ 1915 թվականին, Վեհափառ Հայրապետը արտահայտում է իր խոր համոզումը, որ մեր ժողովորդը անցյալի իր դարը փորձից ելելով այսօր անկեղծորեն և վճռական կերպով կանգնած է հաղաղության հալթանակի համար մարտնչողների կողքին: Դրա լավագույն ապացույն են այսօր Ա. Էջմիածնի և Արա գահակալի խաղաղության հալթանակի օգտին մղվող շահըքերը:

Նորից Սուրբ Օծության խոսքը ունկնդրվում է մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ:

Հավարտ ս. պատարագի, կեսօրվա ժամը 13-ին, Մուկվայի «Արբատ» ճաշարանում Մուկվայի և Համայն Ռուսիի Պատրիարք Պիմենի կողմից համաժողովի կրոնական ենթախմբի անդամների համար տրվում է ընդունելություն, որին ներկա էր նաև Խորհրդային Մինիստրության Մինիստրության

խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Խաչվարչի:

Ողջունելով ճաշկերույթի մասնակիցներին, Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը իր վատահությունը հայտնեց այն առթիվ, որ ներկա միջազգային համաժողովը մի կարևոր միջոցառում կհանդիսանա խաղաղության ճանապարհին և մեծապես կնպաստի ազգերի և ժողովուրդների խաղաղ համագործակցության ու գոյաւնանան:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու կրոնական պետերից առաջինը խորք է առնում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

ՄԵՐ ԱՍՏՎԱԾԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾ Է

Սիրեցյալ հոգնոր եղբայրներ Մեր,

Փրկչական 1986 տարին հոչակված էր խաղաղության տարի Միացյալ Ազգերի Կազմակերպության կողմից: Մենք բոլորս էլ, անցյալ տարի, միախորհուրդ մեր պարտքը կատարեցինք ի խնդիր աշխարհի խաղաղության ամրապնդման, մեր միատեղ աղոռքներով, մեր կենդանի խորքով, մեր կոչերով՝ ուղղված Եկեղեցիներին, պետություններին և համայն մեր հավատացյալներին:

Մեզ բոլորին համար սակայն չի վերջացել խաղաղության տարին: Մեզ բոլորին համար ամեն տարի խաղաղության տարի է, ամեն օր նույնիսկ՝ խաղաղության օր է:

Կասկած չկա այսու, թե մարդկությունը գտնվում է մեծ, աննախնեաց իրադարձությունների նախօրյակին, Ս. Հովհաննես առաքյալի հայտնությունը հիշեցնող:

Այս ճակատագրական պահին, ո՞ր է արդյոք մեր աղերսը առ Աստված, ո՞ր է արդյոք մեր առաքելությունը այսօր, ո՞ր է արդյոք մեր պատգամը ուղղված մեր հավատացյալներին, մեր ժողովուրդներին:

Ահա հարցեր, որոնց մենք պետք է պատասխան տանք՝ իմաստությամբ, քաջությամբ և մանավանդ սիրով դեպի այս հրաշազարդ աշխարհը, դեպի կյանքը, դեպի մեր նմանները:

Այս պահից, երբ Աստված ասաց՝ «Եղիցի լոյս», քառով վերածվեց կոսմոսի: Այն պահից, երբ Բեթղեհեմի երկնակամարից հրեշտակները բերեցին մեծ ավետիսը խաղաղության ու ի մարդկի հաճության, մարդկային կյանքում բացվեց ճանապարհը փրկության՝ մեղքի և մահվան կապահենությոց:

Միթե մեր օրերին պիտի հանգի այդ տիեզերաստեղծ լուսը, և միթե պիտի խափանվի խաղաղության հրեշտակների երգը, մարդկանց իսկ ձեռքով, որոնք ծրագրում են կառուցել մի նոր Բարեկոնի աշտարակ, արհամարիկ զԱստված, կործանել նրա ստեղծագործությունը ու աշխարհը գլորել դեպի անդունող քառսի:

Մեզ թվում է, թե մեր առաքելությունը պետք է լինի քանդել այդ աստվածամերժ աշտարակաշինությունը, փակել դեպի քառս տանող ճանապարհը և պաշտպանել ու պահպանել մեր տիեզերքի լոյսն ու ներդաշնակու-

թյունը, պաշտպանել ու պահպանել խաղաղ կյանքը մեր երկրագնդի, պաշտպանել ու պահպանել դարերի աշխատանքի ու տքնության հրաշալիքները մարդկային ստեղծարար հանճարի:

Աշխարհի խաղաղ գոյավիճակի պահպանումը, միայն պետությունների գործը չէ, այլ, առաջին հերթին գոցեկ, մեր՝ հոգևորականներիս առաքելությունը, Եկեղեցների և կրոնական հաստատությունների առաքելությունը, «Զի ոչ եթէ խոռվութեան է Աստուած, այլ խաղաղութեան» (Ա. Կորնը. ԺԴ. 38): Եթէ մենք Աստուծո ծառաներն ենք, ապա պետք է լինենք ամեն բացից առաջ ծառաները, զինվորները, մարտնչողները Աստուծո խաղաղար կամքի կենսագործման:

Մեր առաքելության այս ճանապարհի վրա, մենք երջանիկ ենք ու հոգեպես ամրապնդված, որ մեր օրերին նաև բազում պետություններ և գիտնականներ ու հասարակական գործիչներ բոյոր երկներից, նոյն խաղաղարար ուղու վրա են գտնվում: Նրանք բոլորը, բոլորը անխստիր մեր մարտակից եղբայրներն են:

Ու արդար լինելու համար, Մենք կարծում ենք պետք է վկայել, թե ո՞չ պատմության ընթացքում չի եղել մի այլ պետություն, որ համայն աշխարհի խաղաղությունը և ընդհանուր զինաթափումը պաշտպանած լինի այնքան բացարձակ վճռականությամբ, անքան համբերատար հետևողականությամբ, այնքան անսակարկ մարդասիրությամբ, ինչքան մեր պետությունը, Սովետական բազմազգ Հանրապետությունների Միությունը, իր ամենապատասխանատու դեկավարի պայծառ իմաստությամբ:

Կան այս, լուծելի նաև այլ հարցեր, հրատապ հարցեր՝ սոցիալական արդարության և մարդու իրավանց հարցեր, ճնշված ու շահագործվող ազգությունների ազատագրման հարցեր, ցեղային խորականությանց վերացման հարցեր, անհրավիած ազգությունների հողային արդար պահանջներ: Այս, այս և նման հարցեր պետք է մնան Միացյալ Ազգությունների Կազմակերպության և մարդկության խճի օրակարգի վրա, իրագործելի խաղաղ ճանապարհներով, արդար լուծում տալու համար դրանց՝ առանց սրի և հրի, առանց ուղմական առնակատումների:

Հետ այսու որևէ արդար հարց չի կարելի պատերազմներով լուծել:

Արդարությունը հնարավոր է միմիայն խաղաղությամբ:

Ավելի քան երեք այժմեական է Հակովրու առաքյալի պատգամը՝ «Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որ առնեն զիսաղաղութիւն» (Հակովրու Գ. 18):

Թող բարին Աստված օրինի ու զորացնի բոլոր նրանց, ովքեր մեր օրենին մարտնչում են իրենց ձեռքն առած գենքը խաղաղության:

Ծաշկերույթի ընթացքում ողջունի խոսքով հանդես են գալիս մի շարք ներկայացուցիչներ (ուսքի Արթուր Շնայերը, Լիքանանի Մուֆթի Հասան Հալեթը, Սիրիայի Մուֆթի Ահմեդը, Նորին Սուոր Օծություն Խլիա Բ-ն, Քրիստոնեական Խաղաղության Կոնֆերանսի գլխավոր քարտուղար Լյուբոմիր Միրեժովսկին, Բուղարական Օրթոդոքս Եկեղեցու պետ Մաքսիմ Պատրիարքը և ուրիշներ), որոնք իրենց գոհումակությունն են հայտնում համաժողովի աշխատանքների վերաբերյալ:

Ծաշկերույթն ավարտվում է շերմ և անմիջական մթնոլորտում:

Նոյն օրը, երեկոյան ժամը 17-ին, պավլում են ընդհանուր հիատերը, որի ընթացքում երեք աշխատանքային խմբերը հաշվետվություն են տալիս իրենց հավաքի արդյունքների վերաբերյալ: Հնտրվում է խմբագրական

հանձնաժողով, որը սկսում է ապագա փաստաթյուի՝ «Համընդհանուր գործողության կոչ» պատրաստումը:

Հաջորդ օրը, փետրվարի 16-ին, Կրեմլի համագումարների մեծ պալատում սկսում է «Հանուն միջուկագերծ աշխարհի, հանուն մարդու վերապրումի» համաժողովի եզրափակիչ հիստը, որին մասնակցում էին բոլոր ենթախմբերի ներկայացուցիչները, պետական և զանազան կազմակերպությունների հայտնի ներկայացուցիչներ, գիտնականներ, քաղաքական գործիչներ:

Ծիշտ ժամը 11-ին դահլիճը հոտնկայս, ծափահարություններով ողջունում է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության գլխավորքարտուղար Մ. Ս. Գորբաչովին և պետական գործիչներին:

Նախագահական ամքիոնում համաժողովը ներկայացնողների շարքում համաժողովի կրոնական ենթախմբի անունց տեղ է գրավել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կետրոնական կոմիտեի անդամ միտրոպոլիտ Պողոս Մար Գրիգորիոսը, որը իր ներթին բռվամդակայից և գեղեցիկ կերպով շարադրում է կրոնական ենթախմբի տեսակետները խաղաղության պահպաննան պայքարի վերաբերյալ ի ցուց դնելով կրոնական ենթախմբի կողմից մշակված «Համընդհանուր գործողությանց կոչը»:

Համաժողովի բոլոր մասնակիցներին ողջունի եզրափակման խոսք է ասում տիար Մ. Ս. Գորբաչովը:

Հավարտ հիստի Խորհրդային Միության կառավարության կողմից, ի պատիվ համաժողովի մասնակիցների, տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին տիար Մ. Ս. Գորբաչովը, Ս. Ս. Գրոմիկոն, Է. Ս. Շնարդեան, Ե. Կ. Լիգաչովը, Ս. Ն. Ցակովիկը և այլ կառավարական անձինք:

Հաջորդ օրը, փետրվարի 17-ին, Խորհրդային Միության Գերագույն սովետի պալատում, Խորհրդային Միության Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Պ. Ն. Դեմիչկի կողմից, ի պատիվ կրոնական ենթախմբի շուրջ 30 պատվավոր անդամների, տրվում է ընդունելություն, որին մասնակցում էր նաև ազգին Վեհափառ Հայրապետը:

Ընդունելությանը ներկա էին նաև Խորհրդային Միության Գերագույն սովետի նախագահության քարտուղար Թ. Մենթեշաշվիլին և Խորհրդային Միության Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Կ. Մ. Խարչնը:

Ողջունելով հավաքի մասնակիցներին, Պ. Ն. Դեմիչկը, հանուն Խորհրդային Միության կառավարության, իր գորունակությունն է հայտնում Միջուկային համաժողովի առթիվ և շնչտում նրա պատմական նշանակությունը, դրական դերը պատմության մեջ և ժողովուրդների կյանքում: Պ. Ն. Դեմիչկի ողջունի խոսքից հետո կրուտիցու և Կոլումնայի միտրոպոլիտ Յովկենալին Խորհրդային Միության կառավարության ներկայացուցիչներին հակիրճ կերպով ծանոթացնում է համաժողովի արդյունքներին և որպես հուշանվեր Պ. Ն. Դեմիչկն է հանձնում համաժողովի խորհրդանշանը՝ աշխարհը դիտված հրթիռի պատուհանից, ինչպես նաև Խորհրդային Միության կառավարությանն է հանձնում կրոնական ենթախմբի կոչ՝ ուղղված աշխարհի պետությանց դեկապարներին, որից հետո խոսքը տրվում է Վեհափառ Հայրապետին: Եր խոսքում նորին Սուրբ Օծությունը Հայ Եկեղեցու անունց ողջունում է Խորհրդային Միության կառավարության դեկապար անդամներին: Խոսելով Կրեմլի համագումարների պալատում տեղի ունեցած հիստի մասին, Վեհափառ Հայրապետը վեր է հանում նրա պատմական նշանակությունը ժողովուրդների կյանքում:

Խորհրդային Միության ղեկավար Մ. Ս. Գորբաչովը «մի ճարտարապետ է», ասում է Նորին Սուրբ Օծությունը, «ճարտարապետ ոչ միայն ղեկավատացման և վերափոխման, այլ նաև՝ ճարտարապետը խաղաղության ամբողջ աշխարհում»: Իր կողմից Վեհափառ Հայրապետը վստահեցնում է Խորհրդային Միության կառավարությանը, որ Հայ Եկեղեցին իր կարելին կանի խաղաղության պահպանման գործում և իր հնարավոր օժանդակությունը ցույց կտա Խորհրդային Միության կողմից տարվող առաջադեմ միջոցառումներին:

Վեհափառ Հայրապետի ողջունի խոսքից հետո հանդես են գալիս կրոնական մի շարք համայնքների ներկայացուցիչներ (7 օրվա աղվենտիստ Վիլսոնը (ԱՄՆ), բուդդայական համայնքի ներկայացուցիչ Գարուլան (Հնդկաստան), Նորին Սուրբ Օծություն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը, մահմետական կոնֆեռանսի գլխավոր քարտուղար Փիլցարդան, Սիրիայի գլխավոր Մուֆթի Ահմեդը, հրեա ուսքրի Արթուր Շնայերը (ԱՄՆ), հոգեմարտիկ Իվան Վերիգինը (ԱՄՆ), պատոր Անդրիամանջատոն (Մադագասկար):

Ընդունելությունն ավարտվում է Պ. Ն. Դեմիչի շնորհակալական խոսքով, որ մեծ նշանակություն է տրվում Եկեղեցների և կրոնական համայնքների մղած խաղաղափրական դերին ժողովուրդների և պետությունների կյանքում:

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը Տ. Անանիա Եպիսկոպոսի ուղևորությամբ այցելում է Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի առընթեր կրոնական գործերի խորհրդու, որ ընդունվում է խորհրդի նախագահ Կ. Ս. Խարչնի կողմից:

Հանդիպմանը ներկա էր նաև կրոնական գործերի խորհրդի բաժնի վարիչ Ս. Ս. Մուխինը:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը, որպես պատվիրակության գլխավոր, մի շարք ժողովի մասնակից հոգևոր գործիչների հետ այցելություն է տալիս Մոսկվայում չինական դեսպանատուն՝ հանձնելու չինական կառավարությանը, որպես միջուկային գենք ունեցող մի տերություն, համահավաքի կրոնական ենթախմբի կոչք: Ժողովի մասնակից պատվիրակները մեծ շերտությամբ են ընդունվում չինական դեսպանի և նրա աշխատակիցների կողմից:

Հաջորդ առավոտյան, փետրվարի 18-ին, Նորին Սուրբ Օծությունը իր շքախմբի հետ վերադառնում է Երևան:

Մոսկվայի օդանավակայացման Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մայթելու էին եկել Տ. Տիրան Վրդ. Կյուրեղյանը, Ռուս Եկեղեցու ներկայացուցիչներ Սերգի Միտրոպոլիտը և Մարկել արքանա:

Հրամեցուին ներկա էր նաև Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի առընթեր կրոնական գործերի խորհրդի բաժնի վարիչ Ս. Ս. Մուխինը:

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանեց Երևան, որ նրան դիմավորեց և բարի գալուստ մայթեց Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հովհաննես արքեպոս Սանելուրյանի:

Նորին Սրբությանը բարի գալուստ մայթեցին նաև Հայկական ԱՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Մտեկիան Վարդանյանը և տեղակալներ տիար Անդրամիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Նորին Սուրբ Օծովյան S. S. Վազգեն Ա. կաթողիկոսի այցը Մոսկվա, նրա մասնակցությունը խաղաղության այս համաժողովին մեծագույն դժու սկզբումը հանդիսացավ Հայ Սովաքելական Եկեղեցու և նրա իմաստուն հովվապեսի ազնիվ մտածումների՝ տեսնելու մեր երկրագունդը ազատ ու երշանիկ՝ զերծ պատերազմի ու մարդկության ոչնչացման սպառնալիքներից:

ԱՆԱՆԻԱ ԵՊՈ. ԱՐԱԲԱԶՅԱՆ

